

ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐԸ

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

1847 թ. թեոդոսացի հայ վաճառական Խաչուկյանը Մոսկվայի Լազարյան ճեմարանին նվիրում է մադաղաթյա մի ավետարան՝ գրված 887 թ., որը մուծվում է ճեմարանի ձեռագրերի հավաքածուի մեջ № 68-ի տակ: Այն դարձավ հավաքածուի ամենահին ձեռագիրը և ստացավ «Լազարյան ավետարան» մականունը: Շուտով պարզվեց, որ դա մեզ հասած հայերեն թվակիր ամենահին ձեռագիրն է¹, և իր վրա բեռեց բանասերների ու արվեստագետների ուշադրությունը:

1876 թ. լույս է տեսնում Մսեր մագիստրոս Մսերյանցի «Տեղեկութիւնք զհանգամանաց հնագոյն գրչագիր ավետարանին, որ գտանի ի մատենադարանի Լազարեան ճեմարանի»² ուսումնասիրությունը, 1893 թ. Ք. Քուչուկ-Նով-հաննիսյանի «IX դարի հայերեն ձեռագրի մասին»³ հոգվածը և այլն:

Նկատի ունենալով, որ իբրև հնագոյն գրչագիր այս ավետարանը մեծ կարևորություն ունի հայ հնագրության և, մանավանդ, նոր կտակարանի բնագրի ֆննական ուսումնասիրության համար, ինչպես նաև հետաքրքրական է ուղղագրության տեսակետից, Լազարյան ճեմարանի մասնագիտական դասարանների խորհուրդը որոշում է տպագրել հիշյալ գրչագիրը լուսատիպ նմանահանությունամբ, որպեսզի պահպանվեն «ամենայն ճշմարտությամբ, մինչև վերջին նշանախեցը, բոլոր նրա առանձնահատկությունները»⁴ և դրանով միջոց տրվի մասնագետներին ձեռքի տակ ունենալու համատարմագոյն օրինակ:

1899 թ. Մոսկվայում որակյալ թղթի վրա իրականացվում է այդ ձեռնարկությունը՝ ձեռագրի 2/3 մեծությամբ, «Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց, գրեալ ՅԼԶ Հայոց եւ յամի Տեառն 887» վերտառությամբ: Ավետարանի լուսատիպ նմանահանության Առաջաբանում⁵, որը պատկանում

1 Ավելի հին ձեռագրեր և պատառիկներ կան, իհարկե, բայց դրանց հիշատակարանները կաս չեն պահպանվել, կամ չեն գրվել: Ուստի, ելնելով հնագրական և մատենագիտական տրվյալներից, անթվական ձեռագրերը թվագրվում, ավելի ճիշտ դարագրվում են մոտավորապես:

Վերջերս հայտնաբերվեց Մլքե թագուհու անունով հայտնի ավետարանի (Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան) կազմելու թվականը՝ 862: Ուրեմն ձեռագիրը գրվել է այդ թվականին կամ դրանից մի քանի տարի առաջ: Ձեռագրի առաջին կազմողը վերջին թերթի երկրորդ երեսին թողել է հետևյալ տեղեկությունները. ՆԿԶ թերթ 3ԺԱ թ. Արացի ԻԸ Բ. Արեգ. Զ. Ե, որը կարդացվում է՝ 466 թերթ, 862 թվական (կազմելու) արացի 28, երկուշաբթի, արեգի 6, հինգշաբթի: Ուրեմն Մլքեի ավետարանը կազմվել է 862 թ. 39 օրում: Մլքեի ավետարանը, այսպիսով, դառնում է մեզ հասած հայերեն թվակիր հնագույն ձեռագիրը, իսկ Լազարյան ավետարանը՝ Մաշտոցի անվ. Մատենադարանի թվակիր հնագույն ձեռագիրը:

2 «Փարոս», Մոսկվա, 1876, տետր Ե, էջ 28—39:

3 X. И. Кучук-Ноанесов, Об армянской рукописи IX века..., Древности восточные», т. I, вып. III, М., 1893, էջ 454—465:

4 «Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց», Մոսկվա, 1899, էջ Ա (այսուհետև՝ Աւետարան):

5 Նույն տեղում, էջ Ա—ԺԲ:

ի. Գր. Խալաթյանցի գրչին, նկարագրված է ձեռագիրը, ներկայացված են տպագրի համեմատությամբ նրա ունեցած բառային և իմաստային տարրնթերցվածները, անհամաձայնություններն ու տարբերությունները:

Լազարյան ճեմարանի 215 ձեռագրերի հետ միասին 1925 թ. Ավետարանը տեղափոխվում է էջմիածնի մատենադարան⁶, ստանալով 6200 համարը, որը սլահականում է նաև այսօր, Մաշտոցի անվան Մատենադարանում: Ձեռագիրն ունի 229 մագաղաթյա թերթ, 37×28 սմ մեծությամբ: Պրակները կազմված են 8-ական թերթից: Երկաթագիր է, երկսյուն գրությամբ, քսանական տողով: Մագաղաթը, ինչպես նաև թանաքը, դեղնագույն են: Տողագծերը արված են ձնշումով: Ձեռագրի սկզբում տառերը տեղավորված են երկու տողագծերի միջև, որոնց հեռավորությունը միմյանցից 0,5 սմ է, իսկ միջտողային տարածությունը՝ 0,9 սմ: Մյուս էջերը գրված են մի տողագծի վրա, տառերի մեծությունը նույնն է, իսկ տողագծերն իրարից հեռու են 1,4 սմ: Սյունակներից ամեն մեկը 9 սմ լայնք ունի, միջսյունակային լուսանցքը՝ 3,3 սմ է:

Թերթերը եզրերից մաշված են, խոնավությունից տեղ-տեղ անընթեռնելի են դարձել, կան խանձի, այրվածքի հետքեր: Որոշ թերթեր պակասում են: Առաջին պրակից պահպանվել է երկու թերթ՝ չորս խորաններով: Պահպանվել են գրչի հիշատակարանը և մի հիշատակագրություն, ինչպես նաև հետագա երեք հիշատակագրություն: Ձեռագրի գրչին է Սահակ Վանանդացին, գրված է, ինչպես ասվեց, 312 (887) թվականին: Գրիչը միաժամանակ և ստացողն է:

* * *

Լազարյան ավետարանը, որպես մեզ հասած հնագույն ձեռագրերից մեկը, բացառիկ նշանակություն ունի գրչության արվեստի որոշ հարցերի ուսումնասիրման տեսակետից: Այդ հարցերից է հայոց գրատեսակների ստեղծման ու գործածության ժամանակների խնդիրը, որի մասին մինչև այսօր էլ երկու տեսակետ գոյություն ունի: Հայագետների մի մասը գտնում է, որ Մաշտոցը ստեղծել է միայն երկաթագիրը, որից առաջացել է ուղղագիծ երկաթագիրը (X—XI դդ.), սրանից՝ բոլորգիրը (XI—XII դդ.), ապա՝ նոտրգիրը (XIV—XV դդ.) և շղագիրը: Մյուս մասը գտնում է, որ V դարում արդեն գոյություն ունեին մեկից ավելի գրատեսակներ⁸:

Ձեռագրական և վիմագրական նյութերը նորանոր փաստեր են տալիս վերջին տեսակետի կողմնակիցներին: Լազարյան ավետարանը ևս դրա օգտին է խոսում, շնայած առաջին տեսակետի պաշտպանները, հաշվի առնելով Լազարյանի բոլորագիծ երկաթագիրը, նրանից հետո են թվագրել ուղղագիծ երկաթագրով գրված շատ հնագույն ձեռագրեր: Դեռևս 1899 թ. Գր. Խալաթյանցը նկատում է, որ ավետարանի «համաբարբառների նշանագրերի մեջ հաճախ պատահում է նույն սկզբնական գրչից բոլորգիր»⁹:

6 Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, 1965, էջ 132 («Ցուցակ Մաշտոցի անվան Մատենադարանի», հատ. Ա, Առաջաբան):

7 Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1958, էջ 66—109:

8 Գ. Հովսեփյան, Հայոց գրի գլխավոր տեսակները, «Տարագ», Թիֆլիս, 1912, № 10, էջ 168—182: Կ. Ղաֆադարյան, Հայ գրերի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 35—36:

9 Աւետարան, էջ Բ:

Բայց միայն բոլորգիրը չէ, կան նաև այլ դրատեսակներ:

Ձեռագիրը գրված է բոլորագիծ երկաթագրով, գեղեցիկ, համաչափ և կանոնավոր գրությամբ: Այն գրերը, որոնց վերջավորությունը ավարտվում է աջում, ինչպես Լ, Վ, Ղ, Ը, Ջ, թեքվում են դեպի ցած: Վ-ի երկու գծերն իրար հավասար են: Տողից ցած են իջնում Ք-ի և Փ-ի ստորին ծայրերը և վերև է բարձրանում Փ-ի վերին ծայրը: Գլխագրերը նույնպես երկաթագիր են, որոնք ավելի մեծ են բնագրի գրից և երբեմն ղբաղեցնում են երկուսից երեք տող: Երբ սյունակը սկսվում է գլխագրով, վերջինս ավելի մեծ է գրվում՝ վերին լուսանցքի հաշվին: Գլխագրերը տեղավորվում են լուսանցքագծի վրա, բայց երբեմն դուրս են գալիս գծից՝ ամբողջովին տեղավորվելով լուսանցքում (դուրս) կամ գրադաշտում (ներս):

Ձեռագրում օգտագործվել է նաև ուղղագիծ երկաթագիրը: Եվսեբիոսի «Թուղթը», ինչպես նաև Համաբարբառը, որից միայն մի տախտակ է պահպանվել, գրված են խառը, բոլորագիծ և ուղղագիծ երկաթագիր տառերով և ավելի շատ ուղղագիծ, քան բոլորագիծ երկաթագիր կա: Ուղղագիծ երկաթագրի ենք հանդիպում նաև բուն բնագրում: Այն դեպքերում, երբ տողավերջում գտնվող բառից մնում են մեկ-երկու տառ, որ գրիչը չի ցանկացել տանել հաջորդ տողը, գրում է տողից վեր կամ վար, ուղղագիծ երկաթագրով ավելի հաճախ, քան բոլորագիծ երկաթագրով, իսկ սյունակի վերջին տողում շտեղավորված ամբողջ բառեր կամ բառամասեր գրվում են ուղղագիծ երկաթագրով գրադաշտից դուրս: Այս գրատեսակին հանդիպում ենք նաև ստորին լուսանցքների համաբարբառներում, հատկապես Մատթեոսի և Հովհաննու ավետարաններում¹⁰: Ուրեմն ուղղագիծ երկաթագիրը գործածվել է բոլորագիծ երկաթագրի հետ այնպես, ինչպես նպատակահարմար է գտել գրիչը:

Բոլորգիրը ևս օգտագործվել է Լաղարյան ավետարանի և՛ բնագրում, և՛ ստորին և միջին լուսանցքների համաբարբառներում: Մենք հանդիպում ենք ա, դ, հ, կ, ժ, բ, զ, մ, ճ, յ, դ, ը, ծ, կ, ց, վ, ք բոլորգրերին: Հայտնի է, որ հայերեն որոշ հնչյուններ տարբեր տառատեսակներում համարյա նույն ձևն ունեն, և դժվար է տառատեսակը որոշել, եթե դրանք տողի կամ բառակապակցության մեջ չեն: Որոշ հնչյուններ ունեն իրենց լուրահատուկ տառաձևը այս կամ այն տառատեսակում: Դրանցից ա, զ, ց, հ, վ, յ տառերի բոլորագիծ երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր և բոլորգիր տառատեսակներին հանդիպում ենք ձեռագրի տարբեր էջերում¹¹:

Համաբարբառներում հանդիպում է նաև որոշ տառերի շեղագրություն, որը հիշեցնում է բանասերների կողմից հնագույն շեղագրի նմուշ համարված Վենետիկի 999 թ. ձեռագրի գրչությունը: Այսպիսով, Լաղարյան ավետարանում կողք-կողքի գրիչն օգտագործել է չորս տառատեսակ՝ բոլորագիծ երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր, բոլորգիր, շեղագիր: Ուրեմն IX դարում այդ տառատեսակները կային և լայն կիրառություն ունեին:

Ձեռագրում կան նաև կցագրության դեպքեր (189ա):

¹⁰ Մատենադարան, ձեռ. № 6200, էջ 3ա, 20բ, 74ա, 75բ, 76ա, 82բ, 83ա, 129ա, 152ա, 214բ և այլն:

¹¹ Նույն տեղում, էջ 6ա, 29ա, 93ա, 98բ, 99ա, 100բ, 101բ, 103ա, 114բ, 116ա, 120ա, 123ա, 126ա, 132ա, 148ա, 148բ, 159բ, 161բ և այլն:

* * *

Ձեռագրում օգտագործված են կետագրության երեք նշաններ. գրչի լայնությամբ ստեղծված մի կետը դրվելով տողից վեր, մեջտեղում և տողի վրա, յոարբեր իմաստային նշանակութուն է ձեռք բերում և կիրառվում է ըստ պաշտոնի, որպես «կէտ աւարտեալ, միջակ և ստորակէտ»: Կետ ավարտյալը կամ վերջակետը տողաշարի վերևում դրված կետն է, մեջտեղում դրվում է միջակը, ինչպես և ցույց է տալիս անունը, իսկ ստորակետը՝ ներքևում, ստորին մասում: Լազարյան ավետարանում վերջակետը երբեմն ունի այսօր կիրառվող ստորակետի նմանություն, որը պարզապես գրչի ձեռքի խաղ է: Գրչի ծայրը միանգամից չի կտրվում թղթից, այլ փոքր-ինչ թեքվում է ձախ, թերևս դրանով ևս առանձնացվում է վերջակետը մյուս կետերից:

Գլխավոր ավետարանները ցույց են տրվում մի նշանով, որը կազմված է պատվանշանից ու երկու տզրիկից: Տերունական բառերի, ինչպես նաև եղբայրությանցքներում գրված համաբարբառների վրա դրվում է պատվանշան. այդ նշանի առաջին կեսը դրվում է սխալներ ցույց տալու համար: Նույն նպատակին են ծառայում նաև իրար հատող երկու գծերը (X) և տզրկիկը (S). Վերջինս դրվում է նաև ուրիշի խոսքից առաջ՝ լուսանցքում:

* * *

Լազարյան ավետարանը հայերեն հնագույն թվակիր մանրանկարված ձեռագիրն է, իսկ նրա գրիչ Սահակ Վանանդացին՝ ժամանակի հայտնի առաջին մանրանկարիչը: Դժբախտաբար, խորաններն ու նկարները պարունակող առաջին պրակից միայն երկու թերթ է պահպանվել, որոնց զույգ էջերում նկարված են շորս խորաններ: Առաջին երեքում տեղավորված է Եվսեբիոսի՝ Կարպիանոսին ուղարկված թուղթը, իսկ չորրորդում՝ Համաբարբառի առաջին տախտակը: Մյուս ինը տախտակները զբաղեցրել են հաջորդ վեց կամ յոթ էջերը, այսինքն՝ երեք կամ չորս թերթերը, իսկ մնացած երկու թերթը մնում է մանրանկարների համար: Այդպես է, Լազարյանից թերևս ավելի հին, № 5547 ավետարանը, որի համաբարբառներին հաջորդած երեք էջերում նկարված է երկու խաչ, հանդիպակաց էջերում, կլոր շրջանակների մեջ, իսկ վերջին երեսին՝ քառակուսու մեջ հյուսածո խաչ:

Ավետարանում պահպանված այս խորանները ամբողջական չեն, պատրված է առաջին թերթի ձախ կողմի սյունը և կամարի վերին մասը, երկրորդ խորանի կամարի վերին մասը: Մուգ կանաչով երիզված դեղնավուն երկու սյունները բարձրանում են իրար վրա դրված մուգ կանաչ և դեղնավուն գերանների վրա և ավարտվում խոյակներով, որոնք կազմված են հետզհետե մեծացող երեք քառանկյունիներից: Խոյակների վրա հանգչում է կամարը՝ շագանակագույն, դեղին, մուգ կանաչ և սև կամ սևացած շերտերով: Երկրորդ խորանը նույնպիսի ձև ունի, միայն ստորին առաջին գերանը դեղին է, երկրորդը՝ կարմիր: Կարմիր է նաև խոյակների սալիկներից մեկը: Այս խորանի վերին ձախ անկյունում պահպանվել է նկարված թռչունի պոչի ծայրը: Թռչունը կամարի վերին մասի հետ պատռված է: Այս թռչունը սիրամարգ է եղել, ինչպես երևում է պոչի պահպանված մասից: Անշուշտ, կամարի մյուս կողմից նման մի այլ սիրամարգ է նկարված եղել: Ուրեմն Լազարյան ավետարանի խորանները ոչ միայն կազմված էին սյուններից, խոյակներից ու կամարներից, այլ նաև զար-

դարված էին զանազան թռչունների և բույսերի նկարներով: Երրորդ խորանը (էջ 2ա) նույնպես կազմված է երկու կրկնասյուներից, ներսի լայն դեղին սյունը և նրանից 1,5 սմ դուրս գծված նեղ կարմիր սյունը հանգչում են ոչ թե ստորին գերանի, այլ խարիսխների վրա, և ավարտվում են ոչ թե խոյակներով, այլ ընդհանուր գերանով, որի վրա հանգչում է կամարը: Գույները նույնն են, բայց տարբեր դասավորությամբ:

Ը տարբերությունն ախորդ երեք խորանների, որոնք ունեին երկուական սյուն՝ Եվսեբիոսի «Թղթի» միասյուն դրուխյան համար, հաջորդ՝ չորրորդ խորանը կազմված է երեք սյուներից՝ երկսյուն դրուխյան համար, որոնցից յուրաքանչյուրը հենվում է սեփական խարսխի վրա՝ կազմված կարմիր-դեղին-կանաչ տարբեր դասավորության և շափսի սալիկներից: Սյուները ավարտվում են խոյակներով, որոնց վրա հանգչում է կրկնականամար՝ նախորդների մի կամարի փոխարեն: Ծաղկողը, օգտագործելով հիմնականում դեղին, կանաչ և կարմիր գույների (մասնակիորեն և դրանց երանգների), ինչպես նաև սյուների, գերանների, կամարների, խոյակների ու խարիսխների տարբեր դասավորությունները, խորաններից յուրաքանչյուրին տալիս է ինքնատիպություն, դրանք դարձնում է անկրկնելի և թարմացնում յուրաքանչյուր նկարազարդված էջը:

Մենք մի հոդվածում¹² ցույց ենք տվել, որ հնագույն ժամանակներում գրիչները նաև ծաղկողներն էին իրենց ձեռագրերի, էթե ուրիշ ծաղկողի անուն չի հիշվում: Հաղարյան ավետարանի գրիչ Սահակ Վանանդացին նաև ձեռագրի ծաղկողն է, և ահա թե ինչու:

Խորանները նկարազարդված են ձեռագրի գրուխյան ժամանակ. նախ նրկարազարդվել է, ապա գրվել. այդ է ցույց տալիս երրորդ խորանի վերջը, որի ստորին մասը ազատ է թողնվել, ենթադրելով, որ բնագիրը կարող է շարունակվել թերևս մի տողով կամ կես տողով: Որովհետև այդ բանը տեղի չի ունեցել, բնագրի գրիչը, որ նույն ինքը Սահակ Վանանդացին է, խարիսխները իրար է միացրել կետագծով և ոլորանախշով: Եթե ձեռագրի հիշատակարանը պահպանված չլիներ, կարելի էր կասկածել, թե այն ուրիշն է ծաղկել, և ծաղկողի անունը չի պահպանվել, բայց քանի որ հիշատակարանը կա և այդպիսի անուն չկա, ուրեմն չի կարելի ձեռագրի ավարտողից նույն գործի մի մասը անջատել և տալ ուրիշին: Հաղարյան ավետարանի գրությունը ցույց է տալիս, որ Սահակ Վանանդացին գրչության հմուտ արհեստավոր է: Երբ համաշափությունը և միօրինակությունը, երկաթագրի անկաշկանդ գծագրությունը, գլխագրերի, հատկապես դժվարագիծ գրերի անթերի կատարումը արդյունք են այնպիսի հմտության, որին հասնելու համար գրիչը պետք է հիմնավորապես խորացած լիներ գրչության արվեստի մեջ: Սահակ Վանանդացին այդպիսին էր. նրա համար խորանասյուներ և կամարներ նկարելը մի առանձին դժվարություն չէր: Եվ վերջապես, խորաններում տեղ-տեղ նկատելի է այն թանաքը, որով գրված է Ավետարանը: Սահակ Վանանդացին որպես գրիչ ավելի կատարյալ է, քան որպես ծաղկող, և դա բնական է, քանի որ գրիչները ավելի շատ գրում էին, քան ծաղկում:

¹² Ա. Մ ա թ և ո ս յ ա ն, Գրիչ Հովհաննես Սանդղկավանցի («Մեղնու ավետարանը»), «Բանբեր Մատենադարանի», N 10, Երևան, 1971, էջ 379—399:

* * *

Հաղարյան ավետարանը պահպանել է հիշատակարանի նաև հիշատակագրության հնագույն, արդեն որոշակի տեսք ստացած ձևը: Նրանից առաջ գրված հիշատակարաններից շատ քիչ բան է մեղ հասել, եղածներն էլ չեն արտացոլում հայերեն ձևագրի հիշատակարանի, որպես պատմագրական որոշակի երկի էությունը: Տարբեր բնույթի և բովանդակության ձևագրերի հիշատակարանները, մնալով ընդունված ձևի շրջանակներում, տեղ-տեղ տարբերվում են իրարից՝ կապված ձևագրի առանձնահատկությունների հետ: Մլքե թագուհու ավետարանը հիշատակարան չունի: Հաղարյան ավետարանինը ընդհանրապես հիշատակարանի և մասնավորապես ավետարանի հիշատակարանի օրինակելի նմուշ է: Գրիչ Սահակ Վանանդացին, փառաբանելով սուրբ երրորդությունը (ա) և պատվիրելով հետագա օգտագործողներին՝ հիշել իրեն (բ), ներկայացնում է ձևագիրը (դ), գրության ժամանակը (դ)՝ այն հաստատելով հոգևոր և մարմնավոր իշխանության ներկայացուցիչների անուններով (դ-1, 2, 3), իրեն՝ որպես գրչի (և) և ստացողի (դ), ծնողներին (է), կողակցին (ը) և խնդրում մեղաց թողություն (թ): Եթե նկատի առնենք, որ գրչության վայրը առանձին չի նշել, որովհետև այն արտահայտվում է իր և հոր մականունների (Վանանդացի) մեջ, կունենանք հայերեն ձևագրերի հիշատակարանի օրինակելի նմուշ, որը հետագայում ընդարձակվել է, համալրվել պատմա-կենցաղային տարրերով՝ միշտ պահպանելով վերը բերված ձևը:

Սահակ Վանանդացու հիշատակարանից չի կարդացվում միայն չորս տող, որ խոնավությունից լվացվել, անհետացել է: Մնացած մասը հրատարակված է ձևագրին նվիրված բոլոր ուսումնասիրություններում և լայնորեն օգտագործվել է շնորհիվ իր պատմա-բանասիրական և մատենագիտական արժեքի: Հիշատակարանից միայն մի տող չի ընթերցվել, և մինչև օրս այն մնում է թյուրընթերցված՝ տեղիք տալով սխալ կոահսումների: Այդ ա սյունակի իններորդ տողն է, որտեղ կարդում ենք «ԵԻԿԱՐԵՍՅԷ ՅԱԽՐԻ» բառակապակցությունը, որին նախորդում է «ՈՐ ՈՔ ԸՆԹԵՒԻՆՈՒ» և հաջորդում «ՆԱԿԷՍ» բառամասերը¹³: Ուրեմն նախադասություն այս հատվածը այսպիսի տեսք ունի. «... որ ոք ընթեոնու եւ կարեսցէ յաւրիւնակէս...»:

Մսեր Մսերյանցը ա-ի վրայի կիսապատիվը մուծելով բառի մեջ, դարձրել է «կաւրեսցէ» և ծանոթագրել «զուցե՝ կաղապարեսցէ»¹⁴: Գր. Խալաթյանցը, խոսելով հիշատակարանի մասին, գրում է. «Հիշատակարանի մեջ կան սխալներ, որոնք առաջ են եկել ընդօրինակողի մոռացությունից. այսպես. «կարեսցէ» փոխ. նկարեսցէ (և ոչ կաղապարեսցէ. ինչպես ենթադրեցին ոմանք), «կաթաղիկոսի» փոխ. կաթաղիկոսի, «Սբատայ» փոխ. Սմբատայ» և այլն¹⁵: Փակագծերում ասվածը վերաբերում է Մսերյանցին: Խալաթյանցի կարծիքով խնդրո առարկա նախադասությունը պետք է կարդալ այսպես. «...որ որ ընթեոնու եւ նկարեսցէ յաւրիւնակէս...»: Ուշագիր բնությունը, սակայն, ցույց է տալիս, որ Մսերյանցի, նրան հետևող Հովհաննիսյանի և Խալաթյանցի կարծիքները թյուրընթերցման արդյունք են: Որ գրիչ Սահակ Վանանդացին այս-

¹³ Մատենադարան, ձեռ. № 6200, էջ 229ա:

¹⁴ Մ. Մսերյանց, նշվ. աշխ., էջ 28:

¹⁵ Գ. Խալաթյանց, նշվ. աշխ., էջ Գ: Տե՛ս նաև Գ. Հովսեփյան, Յիշատակարանը ձևագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 84:

տեղ սխալ է թույլ տվել, ակնհայտ է, բայց որ նա սրբագրելիս իր սխալն ուղղել է, այդ էլ փաստ է, որ մինչև օրս չի նկատվել: Մսերյանցը, ինչպես տևսանք, նկատել էր մեղ հետաքրքրող բառի ա-ի վրայի նշանը և կարծելով, որ այն է (հյուն) է, մոծել է բառի մեջ («կարեսցէ»)՝ առանց հաշվի առնելու, թե այդ ժամանակ ա-ի բոլորգիր ձևը կիրառվում էր թե ոչ (որովհետև մինչև XII դարը կիրառելի էր — ձևը): Բայց այդ նշանը նշանագիր չէ, այլ սխալի նշան, սղման նշան, որը դրվում է բաց թողած տառը գիտակցելու կամ լուսանցքում նրա ուղիղ ձևը գրելու համար: Այդպես են 29բ, 32ա, 46բ, 54բ և այլ էջերում ուղղված բառերը: Ուրեմն ա-ից հետո տառ է պակասում:

Նշված ա-ի և նրան հաջորդող բ-ի ներքևում, դարձյալ գրչի թանաքով, գրված է «զ» տառը, որը մոծվելու է ա-ից հետո և բ-ից առաջ, ավելի շուտ՝ բ-ից առաջ (քանի որ ա-ից հետո էլի մի տառ է պակասում):

Այդ դեպքում կստանանք՝ «կա գրեսցէ»: Իժվար չէ կռահել, որ բաց թողնված տառը «մ»-ն է: Ուրեմն ունենք «կամ գրեսցէ» բառակապակցությունը, իսկ նախադասությունը՝ «...որ ոք ընթեոնու եւ կամ գրեսցէ յաւրինակէս...», բանաձև, որ հանդիպում է համարյա բոլոր հիշատակարաններում¹⁶: Սույն սրբագրությամբ ոչ միայն ձգորտվում է չգիտակցված բառի, տողի, նախադասության ընթերցումը, այլև բացահայտվում հայ մատենագրության մեջ սըղագրության հնագույն օրինակը:

Աստվածաշնչի թարգմանության մեջ պահպանվել է տերունական անունների պատվագրությունը (Տէր, Աստուած, Յիսուս Քրիստոս, Երուսաղէմ, Իսրայէլ)՝ իրենց հոլովված ձևերով: Սրանցից հետո պատվո նշանով հայերենում սղագրվել է «թին» վերջածանցը, որի հնագույն օրինակը հանդիպում է Արուճի տաճարի ներսում հարավային ավանդատան դիմացի որմնասյան վրա փորագրված ՅԺԶ (867) թվականի արձանագրության մեջ, մի քանի տեղում: Դ. Հովսեփյանը այն համարում է «հնագույնը հայ սղագրության մեջ»¹⁷: «Թին» վերջածանցը պատվագրված չէ նաև Լազարյան ավետարանի մեջ: Բանն այն է, որ ավետարաններն ընդօրինակողները աշխատում էին ամեն ինչում հավատարիմ մնալ գաղափար օրինակին, նախ բանին և բառին, ապա կետագրությանը և ուղղագրությանը, նույնիսկ այն ժամանակ, երբ վերջինների մեջ արդեն փոփոխություն էր կատարվում: Լազարյան ավետարանի մեջ սխալը ուղղվում է սղման նշանով, պատվագրությամբ: Սա ցույց է տալիս, որ եղել է նաև սղագրության ուրիշ կարգ, որ կիրառվել է ավելի առօրյա օգտագործման դրուժյուններում կամ բոլորգիր ժողովածուներում: Այդպես են այս ավետարանից մոտ հարյուր տարի հետո գրված հայերեն թղթյա հնագույն ձեռագիր (№ 2679) ժողովածուի մեջ սղված «թագաւոր», «սաղմոս» և այլ բառերը:

Դրիչ Սահակ Վանանդացին մեզ ավանդում է տերունական բառերի և «թին» վերջածանցի սղագրությունից հետո, հնագույն նմուշը:

Ահա Լազարյան ավետարանի հիշատակարանը և հիշատակագրությունը.

¹⁶ «Սրատայ» կամ «կաթաղիկոսի» բառերը նույնպես գրչի մոռացության արդյունք չեն, այլ գրության հնագույն ձևեր: Առաջինը Հաղթատի վանքի հիմնադրման արձանագրության մեջ (991 թ.) գրված է «Սիրատա», իսկ երկրորդը՝ Տեկուրի արձանագրության մեջ (V դ.) դարձյալ «կաթաղիկոս» ձևերով:

¹⁷ Մատենադարանի արխիվ, Գ. Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 90, վավ. 6, էջ 12:

- 229ա Փառք պատիւ եւ գովութիւն սուրբ երրորդութեանն այժմ եւ հանապազ յաւիտեանս ամէն:
- Զգրաւդս սորա եւ զաշխատաւորսս, որ ոք ընթեռնու եւ կամ զրեսցէ յարինակէս, յարժանաւոր աղաւթս ձեր յիշեսցիք:
- Գրեցաւ սուրբ եւ կենսաբէր Աւետարանս այս 312 (887) թուականութեան Հայոց, ի հաշրապետութեանն Գեորգայ Հայոց կաթողիկոսի, եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի, եւ ի տերութեանն Սբստայ Բագրատունւոյ, եւ Սահակ Վանանդացի, որդի Վարդա Վանանդացւոյ, որում կ[ւ]կին Մլեհ կոչեին¹⁸ մաքրութիւն հօգւոյ իմոյ եւ կողակցի իմոյ գտանել ողորմութիւն յաւուրն այցելութեան:
- Աղաչեմ զձեզ սիրողք Քրիստոսի, որք ընթեռնու զսուրբ Աւետարանդ, անմոռաց յիշմամբ հայցել յամենեցունց յարաւշէն զթողութիւն իմ[ոց յա]ն[ցա]նաց:
- Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա ինձ:
- 179բ Փառք քեզ Յիսուս Քրիստոս որ[դի] Աստուծոյ, ողորմած եւ բազմագուր ողորմեա ինձ ի քում զալստեսն¹⁹:

* * *

Հաղարյան ավետարանն ունի նաև հետագա հիշատակագրություններ, որոնք ձեռագրի, նաև ձեռագրագիտության համար ունեն որոշ նշանակութիւն, սակայն լրիվ և ճիշտ չեն վերծանվել, հետևապես՝ նաև բացահայտվել:

«Անուամբն Աստուծոյ եւ Սուրբ Աստուածայծնին, ես տէր Յուսիկս, եւս Ռըստագես, եւ Ստեփանոսս, եւ Խաչատուրս, եւ Մեծիրէ[ց]ս» [ո]ր կատարենք ուխտ առ Աստուած՝ շնորհիւ Սուրբ Աստուածայծնին, եւ ի մարդկանէ Կարապետիս, եւ Նորշահիս, [եւ] Տոնակնիս, եւ Մեհր[ա]բիս, եւ Սարգսիս, և Շահ[էր]իս, և Շահիս, և Գողոցիս, և Շահնորս, և Ա<ա>ւաքս, [եւ Վր]տանիսիս, և Սիմաւոնոյս, և Վարդապետս, եւ լլաղուիս, եւ Կարապետիս, և Խաչատուրս, և պարոն Սեաստոյս, և մեր սարկաւաղոյնս և երկոյ Գր[ի]գոր[ո]ս, որ միայբանեմք Սուրբ Աստուածայծնին և Աստուծոյ, և եղբարք եմք իրերաց, և կենքն և մահն լինի ի մենջ, և Աստուած խաղ(աղ)ութիւն պահե զեղբարութիւնս, և ննջեցելոցս ողորմութիւն շնորհե»²⁰: Այստեղ որոշ անուններ, որոնք ջնջվելու հետևանքով պարզ չեն կարգացվում, գրել ենք հարցականով:

Այս հիշատակագրությունը մարդկանց մի խմբի ուխտն է մյուս խմբի հետ, որոնք միաբանում են Աստծո առաջ, Սուրբ Աստուածածնի միջնորդութեամբ՝ վերջինիս անունը կրող վանքում կամ եկեղեցում, որտեղ պահվում էր ավետարանը: Ուխտի նպատակն էր ապրել որպես եղբայրներ, մեկի կյանքն ու մահը մյուսի համար կյանք ու մահ է: Ուրեմն Աստված թող պահի այն և խաղաղություն տա, որ եղբայրութիւնը հարատեւի:

Եկեղեցիներին, վանքերին ու առանձին ձեռագրերին միաբանելու բաղմամբիվ և բաղմաբնույթ օրինակներ կան, որոնց մարդիկ միաբանում են որևէ պարտավորութիւն կատարելու համար: Այսպես. «Յամի 2 երորդի յիսներորդի (1301) թուականութեանս Հայոց, եկն այր մի աստուածասէր և բարէպաշտ

¹⁸ Այստեղ շորս տող ջնջված է. միայն չի սկզբի գլխագրի երկար գիծն է իջնում մինչև շորորդ տողը, թերևս «Գ» լինի:

¹⁹ Գրված է Մարկոսի վերջում:

²⁰ Մատենադարան, ձեռ. № 6200, էջ 110բ:

Մխիթար անուն, և միաբանեցաւ սրբոյ ուխտիս Սուրբ Թորոսի և Սրբոյ Նշանիս, լինել մասնակից աղաւթից և պատարագաց, և եբեր ընծայս յարդար ընչից իւրոց եղինս երկուս»²¹, — կարդում ենք 1045 թ. գրված երկաթագիր ավետարանի մեջ: Ուրեմն Մխիթարը միաբանել է սուրբ ուխտին աղոթելու և պատարագին մասնակցելու համար՝ նվիրելով մի զույգ եգ: Կամ «Յանուն Աստուծոյ՝ ես Արխութայ՝ Մալիքայ որդի մի[ա]բանեցայ սուրբ Աւետարանիս ու տուի զիմ աղչիկս զէսան՝ Մուսէս իրիցոյ. ով խափանէ դատի Աստուծոյ»²², — գրված է 1212 թ. Հաղբատի նշանավոր ավետարանում: Ուրեմն Արխութան միաբանում է ավետարանին, նրան սպասավոր տալով իր աղջկան: Մշո Առաքելոց վանքին միաբանել էին նրանից շատ հեռու գտնվող Խլաթ քաղաքի մոտի Դանջան գյուղից երեք քահանա եղբայրները՝ Ստեփանոսը, Վարդապետը և Հովհաննեսը, որոնք նշանավոր ճառորնտիրի վաճառքի մասին տեղյակ պահեցին Առաքելոց վանքի առաջնորդին, «զի էին միաբանք Սուրբ Առաքելոցս»²³:

Այս կարգի միաբանողների շատությունից և նվիրատվությունից կախված էր մասամբ տվյալ ուխտի հարստությունը: Հավատացյալներից շատերի համար տվյալ վանքը դառնում էր իրենց ժառանգավոր: Կոստանդին գրիչը մի աստվածաշունչ է ընդօրինակում, որպեսզի իր մահից հետո այն տրվի «...ի ժառանգութիւն մաւրն Աստուծոյ ի յԱւագ Մլիճին... զի իմ ժառանգաւոր սուրբ Աստուածածինն է», — գրում է նա, որովհետև գրչի հայրը իր մահվան օրը դրոն նվիրել է այդ վանքին²⁴:

Ի տարբերություն այս կարգի միաբանողների, Լազարյան ավետարանին միաբանել են եղբայրութեան ուխտով, որպես եղբայր, խաղաղությամբ և սիրով ապրելու համար: Եվ հավանական է, որ ձեռագիրը «Սուրբ ուխտի աւետարան» կոչվում է եղբայրութեան սույն ուխտի, դաշինքի անունով և ոչ թե ս. Աստուածածնի ուխտին պատկանելու համար: «Յանուն Աստուծոյ, ես Պաւղիկս և իմ որ[դ]ի Վարդեգ[ունս] որ գնեցաք զսուրբ Աւետարանս մեզ ի յիշատակութիւն, և սորայ [առ]աջին մեղայց թողութիւն և ի յիշատակութիւն և Հատուտին: Եւ [որ] զայս սուրբ Աւետարանս կարդայ, զմեզ և զմեր [ն]նչեցելս առ Քրիստոս յիշե(ս)ցե, և մեղաց թողութիւն հա(յ)ցե, և Աստուած զձեզ յիշեսցէ իւր աւքայութեանն ամէն: Եւ ապայ գնեցաք զՍուրբ ուխտի աւետարանս իմ եղբաւրն Թորոսի, որ իր աւգնական լինի, և իր տղայոցն՝ Տէրպապուն և Սիմաւունի, ամէն»²⁵: Գրված է երրորդ խորանի լուսանցքում, վերից վար: Իսկ կրկնասյան մեջ դարձյալ վերից վար Վարդեգունի որդին գրել է. «Եւ որ զայս սուրբ Աւետարանս կարդայ մեղայս թողութիւնն հա(յ)ցե իմ պապուն՝ Վարդեգունին եւ իմ մաւրն Հատուտին, և Աստուած ձեզ ողորմեսցի, ամէն»:

21 Մատենադարան, ձեռ. N° 3723, էջ 105բ:

22 Մատենադարան, ձեռ. N° 6288, էջ 111բ:

23 Մատենադարան, ձեռ. N° 7729, էջ 602բ: Հմմտ. Ա. Մաթևոսյան, Երբ և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական-ճառորնտիրը, «Բանբեր Մատենադարանի», N° 9, Երևան, 1969, էջ 145:

24 Մատենադարան, ձեռ. N° 119, էջ 107բ:

25 Մատենադարան, ձեռ. N° 6200, էջ 2ա: Ավետարաններից, նաև այլ ձեռագրերից շատերը անուններ են ունեցել: Որևէ հրաշագործություն վերագրելով նրանց կոչել են «Հրաշագործ», «Սբանչելագործ», «Մեռելահարոց», «Զօրավոր» և այլն: Կոչվել են նաև որևէ տոհմի կամ ուխտի անունով նրանց պատկանելու համար՝ ինչպես «Բեգյունց աւետարան» (Մատենադարան, ձեռ. N° 10099), «Սուրբ Յովհաննէս անուն աւետարան» (Մատենադարան, ձեռ. N° 8906) և այլն, նաև դրութեան, ծաղկի, կաղմի համար, ինչպես «Երկաթագիր աւետարան» (Մատենադարան, ձեռ. N° 4804), «Սաղիկ աւետարան», «Կարմիր աւետարան» և այլն:

Այս հիշատակագրությունները շղագիր են, իսկ նախորդը՝ բոլորգիր, XII—XIII դդ. գրություն և ոչ թե նոտրգիր²⁶։

Հաղարյան ավետարանը իր հնությունը ու հնագրությունը, մանրակարներով ու հիշատակարաններով հայ ձեռագրական մշակույթի ամենաարժեքավոր հուշարձաններից մեկն է, և պատահական չէ, որ առաջինը այն արժանացավ լուսատիպ նմանահանության, հետագայում ընկեր ունենալով միայն էջմիածնի հայտնի ավետարանը։

ДРЕВНЕЙШАЯ РУКОПИСЬ ЛАЗАРЕВСКОГО ИНСТИТУТА

А. С. МАТЕВОСЯН

(Резюме)

Лазаревское евангелие, написанное в 887 г. рукою писца Саака Ванандаци, является одной из древнейших, дошедших до нас армянских рукописей. Раньше оно хранилось в Московском Лазаревском институте, библиотеке которого было подарено в 1847 г. феодосийским купцом Хачукяном. В 1899 г. в Москве было издано факсимиле рукописи, а в 1925 г. она была передана Матенадарану.

Подробное изучение рукописи показывает, что хотя ее текст написан в основном закругленным крупным уставом (*բոլորագիծ երկաթագիր*), однако писец употребил также и другие виды шрифта — прямой устав (*ուղղագիծ երկաթագիր*), круглое (*բոլորգիր*) и косое (*շղագիր*) письмо. Следовательно, уже в IX в. сосуществовали и употреблялись по необходимости четыре различных вида армянского шрифта. Изучение фрагментов хоранов, сохранившихся на двух поврежденных листах, показывает, что художником, исполнившим узоры этих хоранов, был сам писец рукописи Саак Ванандаци.

В статье расшифровываются и уточняются некоторые неясные и неправильно понятые слова в памятных записях рукописи, а также впервые полностью публикуются и поясняются поздние записи, сохранившиеся на ее страницах.

²⁶ Ավետարան, էջ 91